ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 12 >> նոյեմբերի 2013թվականի N 122 -Ա

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ <<ԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ>> ՀՈԱԿ-Ի ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂՈՒՄ (ՓՈՐՁԱՍԵՆՅԱԿՈՒՄ) ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ-ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետարանի <<Անի փողային նվագախումբ>>-ը, որպես համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ձևավորվելուց հետո, իր փորձերը անցկացնում է Միեր Մկրտչյանի անվան մարզամշակութային պալատի (Միեր Մկրտչյան 49) 1-ին հարկի դահլիճում: Փորձասենյակը պատշաճ վիճակի բերելու նպատակով իրականացվել են շինարարական-աշխատանքներ, որոնց համար կատարվել են դրամական ծախսեր:

Հիմք ընդունելով վերոգրյալ ծախսերի վերաբերյալ <<Մշակույթի և երիտասարդության հարցերի>> բաժնի պետ Արտաշես Կարապետյանի կողմից ներկայացված նախահաշիվը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ պարբերությամբ, 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. <<Անի փողային նվագախումբ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության բանկային հաշվեհամարին փոխանցել 285.000 (երկու հարյուր ութսունհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին՝ փոխանցումը կատարել քաղաքապետարանի մշակույթի ցանցին նախատեսված և չօգտագործված գումարների հաշվին:

Կողմ (20) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ա.Ադամյան_____

Գ.Ադամյան_____

Ա.Բաղեյան _____

Ա.Բաղրամյան_____

Լ.Բարսեղյան_____

Մ.Գաբոյան_____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եղիգարյան _____

Գ.Թաթարյան_____

Հ.Խաչատրյան _____

Հ.Կարապետյան_____

Տ.Հովհաննիսյան_____

Վ.Հունանյան_____

Ն.Մեսրոպյան_____

Ռ.Մխիթարյան_____

Է.Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Ա.Վարդանյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

2013թ. նոյեմբերի 12

ք.Գյումրի